Հավելված 2
2024 թ. փետրվար 07-ին
Կնքված N «ԴՏՊ-11414-11018/24 ՀԿԱՐԳ» պայմանագրի

Դրամաշնորհային հաշվետվություն N 3

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Ծրագրի անվանում | «երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում» «Փոքրիկ Իշխան» ցերեկային սոցիալական կենտրոն Գավառ |
| Դրամաշնորհի N | «ԴՏՊ-1141-11018/24 ՀԿԱՐԳ» |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ ԱՍՀՆ |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Հայկական Կարիտաս» ԲՀԿ |
| Ծրագրի իրականացման ժամանակահատված | 03.01.2024-31.12.2024 |
| Հաշվետու ժամանակահատված | 01.07.2024-30.09.2024 |
| Ներկայացման օր | 14.10.2024թ |
| Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն) | Արևիկ Թումասյան/ծրագրի ղեկավար/ |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

***Միջոցառման նպատակ:*** *«Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների» տրամադրում՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված մինչև 18 տարեկան երեխաների ընտանիքում ապրելու և նրանց սոցիալական ներառումն ապահովելու նպատակով զարգացնել երեխաների ֆիզիկական, մտավոր և հոգեկան կարողություններն ու կյանքի հիմնական հմտությունները, երեխաներին և նրանց ընտանիքներին տրամադրել սոցիալ-վերականգնողական, հոգեբանական և իրավաբանական խորհրդատվություն և աջակցություն՝ խթանելու երեխաների սոցիալական, կրթական, առողջապահական և ընտանիքում մեծանալու հիմնարար իրավունքների իրացումը, կանխելու նրանց մուտքը հաստատություններ և /կամ նրանց սոցիալական մեկուսացումը, ապահովելու ընտանիքի հետ վերամիավորումը՝ նպաստելով կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի ինքնօգնության, ինքնորոշման ու ծագած հիմնախնդիրներն ինքնուրույն լուծելու ունակությունների զարգացմանը:*

Համառոտ նկարագիր հաշվետու ժամանակահատվածի վերաբերյալ:

Հաշվետու ժամանակահատվածում Գավառի «Փոքրիկ Իշխան» ցերեկային խնամքի սոցիալական կենտրոնում իրականացվել է երեխաների տվյալների հավաքագրում, կարիքի գնահատում և վերագնահատում: Պարբերաբար թարմացվել է երեխաների տվյալների բազան և կենտրոն հաճախման գրաֆիկը հիմնված անհատական սոցիալական ծրագրերի հիման վրա: Օրեկան կենտրոն է հաճախել **25-35** երեխա և մասնակցել են կենտրոնի կողմից իրականացվող ծառայություններին:

Կենտրոնում շահառուներին մատուցվել են հետևյալ ծառայությունները՝

- Սոցիալական
- Հոգեբանական
- Լոգոպեդի
- Սննդի տրամադրում/ ճաշ կենտրոնում
- Խմբավարի
- Անձնական օգնականի

Սոցիալ-հոգեբանական աշխատանք է իրականացվել շահառու երեխաների, ծնողների և նրանց ընտանիքի անդամների հետ:

Շահառու երեխաները կենտրոնում զբաղվում են տարաբնույթ քարտային ժամանցային և ինտելեկտուալ խաղերով, փազլներով, սպորտային սեղանի խաղերով ինչպիսիք են շախմատը, շաշկին, սեղանի թենիսը, բոուլինգը: Խաղերը նպաստում են երեխաների ուշադրության, երևակայության, ինտելեկտուալ և տեղծագործական մտածողության, մտահորիզոնի զարգացմանը ձևավորմանը, նրանք դառնում են ինքնուրույն, կարողանում են միասնական որոշումներ կայացնել, համագործակցել: Այս ամենը նպաստում են նաև երեխաների ճկուն մտքի ձևավորմանը, բարձրացնում է ընդհանուր ինտելեկտը, զարգացնում շահառուների ճկունությունը, շարժումների կոորդինացիան: Խաղերը նպաստում են հայերեն լեզվի ճիշտ կիրառմանը, պահպանմանը, զարգացմանը առօրյա միջավայրում, զարգանում է նրանց լակոնիկ խոսքը:

Երեխաները ցերեկային կենտրոնում գտնվելու ժամանակահատվածում ապահովվում են ամենօրյա տաք սննդով, հիգիենիկ պարագաներով և գրենական պարագաներով:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են միջոցառումներ ըստ նախորոք մշակված աշխատանքային պլանի: Իրականացվել են կանխարգելիչ և տեղեկատվական հանդիպումներ ու միջոցառումներ ծրագրի շահառու ծնողների և երեխաների շրջանումնվիրված <<Ոչ Բռնությանը>> միջազգային օրվան:

Հաշվետուու ժամանակահատվածում ծրագրի շահառու երեխաների համար կազմակերպվել են և ճանաչողական, ուսումնական հմտությունների զարգացմանը ուղղված այցեր և ճամբարներ:

**Աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ գործողությունները.**

**<<Ոչ բռնությանը>> միջազգային օրվան նվիրված իրազեկող և կանխարգելիչ հանդիպումներ, միջոցռումներ:**

Ս/թ սեպտեմբեր ամսին Հայկական Կարիտասի Գավառի <<Փոքրիկ Իշխան>> ցերեկային խնամքի սոցիալական կենտրոնի կողմից իրականացվել է <<Ոչ բռնությանը>> միջազգային օրվան նվիրված իրազեկող և կանխարգելիչ հանդիպումներ, միջոցռումներ:
Իրազեկող և կանխարգելիչ հանդիպումները, միջոցառումները իրականացվել են ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության նախաձեռնությամբ:
<<Ոչ բռնությանը>> միջազգային օրվան նվիրված իրազեկող և կանխարգելիչ հանդիպումներ, միջոցռումներին ընդհանուր թվով մասնակցել է **82 շահառու երեխա** և **46 շահառու ծնող:**
Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ Իրազեկող և կանխարգելիչ միջոցառումները՝

- Իրազեկող և կանխարգելիչ հանդիպումները, դասընթացներ ծրագրի շահառու երեխաների համար: Բռնության տեսակները, դրանց տարբերակումը և բոլորքարկման մեխանիզմների մասին իրազեկման վերաբերյալ տեղեկատվալան հանդիպումներին մասնակցել է **79** շահառու երեխա, որից՝ տղա **36**, աղջիկ **43**: Հանդիմումների ընթացքում կենտրոնի սոցիալակ աշխատողները և հոգեբանը շահառուներին ներկայացրել են բռնության տեսակները, քննարկվել են բռնության փոխարեն կիրառվող այլընտրանքային տարբերակները, տեղի է ունեցել իրավիճակների ներկայացում և քննարկում տարբեր տեսանկյուններից, ներկայացվել են պաշտպանական վարքագծի գործընկերությունները, առանձնակի շեշտադրվել է կիբեռհափշտակիչների կողմից իրականացվող բռնության դեպքերը, քննարկվել են թե ինչպես է մեր մարմինը տեղեկացնում մեզ, որ ինչ-որ բան այն չի, քննարկվել են բռնության իրական դեպքեր և ներկայացվել են բողոքարկման մեխանիզմները:
  Հանդիպման արդյունքում մասնակիցները կարողանում են տարբերակել բռնության 4 տեսակները՝ ֆիզիկական, հոգեբանական, սեռական, տնտեսական, և նրանք իրազեկ են Հայկական Կայկական կարիտասի երեխաների պաշտպանության քաղաքականությանը և բողոքարկման մեխանիզմներին:
  Հանդիպման ընթացքում իրականացվել է նախաթեստերի և վերջնական թեստերի լրացում՝ մասնակիցների գիտելիքների ու իրազեկվածության չափման նկատակով:

- Իրազեկող և կանխարգելիչ հանդիպումները, դասընթացներ ծրագրի շահառու ծնողների համար: Հանդիպմանը ներկա են գտնվել **26** ծնող/մայրեր: Հանդիպման սկզբում տեղի է ունեցել Հարրի Հարլոուի գիտափորձի դիտում և քննարկում՝ կարևորելով երեխաների կյանքում ապահովության զգացումը: Այնուհետ տեղի է ունեցել վարժանք, որի ընթացքում

մասնակիցները իրենց պատկերացրել են փոքր հասկում: Տեղի է ունեցել Բռնության տեսակների ներկայացում, քննարկվել են բռնության փոխարեն կիրառվող այլընտրանքային տարբերակներ, տեղի է ունեցել իրավիճակների ներկայացում և քննարկում տարբեր տեսանկյուններից: Ծնողներին ներկյացվել է պաշտպանական վարքագծի գործընկերությունները, առանձնակի շեշտադրվել է կիբեռհափշտակիչների կողմից իրականացվող բռնության դեպքերը, քննարկվել են թե ինչպես է մեր մարմինը տեղեկացնում մեզ, որ ինչ-որ բան այն չի, ներկայացվել են ծնողի կողմից երեխաների բռնությանը արձագանքման փուլերը, քննարկվել են բռնության իրական դեպքեր և ներկայացվել են բողոքարկման մեխանիզմները:
Հանդիպման արդյունքում մանսնակիցները տարբերակում են բռնության տեսակները և իրազեկ են Հայկական Կարիտասի պաշտպանության քաղաքականությանը և բողոքարկման մեխանիզմներին:

- Իրազեկող խմբային աշխատանք ծրագրի շահառու երեխաների ակտիվ մասնակցությամբ: Գավառի <<Փոքրիկ Իշխան>> կենտրոնի կողմից իրականացվող <<Ոչ բռնությանը>> միջազգային օրվան նվիրված իրազեկող և կանխարգելիչ արշավի շրջանակներում նկարահանվել է իրազեկող տեսանյութ՝ կենտրոնի սաների մասնակցությամբ: Ծևագրի շահառուները իրազեկվել են, այն մասին որ 2007 թվականի հունիսի 15-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան հաստատել է հոկտեմբերի 2-ը որպես «Ոչ բռնությանը» միջազգային օր: Տեսանյութը լուսաբանվել և տարածվել է կազմակերպության սոցիալական ցանցերի միջոցով: Կենտրոնի սաները նաև Արտ-թերապիայի միջոցով պատրաստել են պաստառներ <<Ոչ բռնությանը>> կորերով:

- Ամփոփիչ իրազեկող հանդիպում ծրագրի շահառու ծնողների, կենտրոնի բազմամասնագիտական թիմի և համագործակից կառույցների համատեղ մասնակցությամբ: Ս/թ հոկտեմբերի 2-ին Գավառի <<Փոքրիկ Իշխան>> ցերեկային խնամքի սոցիալական կենտրոնի կողմից իրականացվում է <<Ոչ բռնությանը>> միջազգային օրվան նվիրված իրազեկող և կանխարգելիչ հանդիպումներ, միջոցռումների շրջանակներում կենտրոնում իրականացվեց ամփոփիչ թեմատիկ հանդիպում <<Ոչ բռնությանը>> խորագրով: Միջոցառմանը մասնակից կառույցներին ուղարկվել են պաշտոնական հրավերներ: Հանդիպմանը հրավիրած էին համագործակից կառույցների ներկայացուցիչներ, ովքեր իրենց մասնագիտական փորձով և դիտարկումներով կիսվեցին ծրագրի **10** շահառու ծնողների հետ: Հանդիպմանը հրավիրած համագործակից կառույցների ներկայացուցիչները ներկայացրեցին իրենց մասնագիտական փորձը և դիտարկումները թեմայի վերաբերյալ, շահառու ծնողներին ներկայացրեցին իրենց կոնտակտային տվյալները, օրենսդրական ակտերը: Հանդիպմանը մասկացություն ունեցան մասնագետներ հետևյալ համագործակից կառույցներից՝
  - ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի Գեղարքունիքի մարզային ստորաբաժանում
  - Կանանց աջակցման կենտրոն
  - Գավառի Հոգեկան առողջության կենտրոն (ՀԱԿ)
  - Գավառ քաղաքի Պ. Ղանդիլյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոց
  - Գավառ քաղաքի №5 հիմնական դպրոց
  - Գավառի Մ.Բունիաթյանի №8 միջն. Դպրոց

**Բաց դռների արշավ կենտրոնում:** Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնում իրականացվել են 2 տեսակի Բաց դռների արշավ՝

- **Սերունդների երկխոսություն**: Հայկական Կարիտասի Գավառի <<Փոքրիկ Իշխան >> սոցիալական կենտրոնի և Գավառի <<Տնային խնամք Միայնակ տարեցներին>> ծրագրի շահառուներին համախմբել էր Սերունդների Երկխոսություն խորագիրը կրող միջոցառումը: Կենտրոնում տարեցների համար կազմակերպվել էր Բաց-դռների արշավ՝ ներառելով հետևյալ գործողությունները՝
- Փոքրիկ Իշխան կենտրոնի սաները տարեցներին դիմավորեցին գեղարվեստական կատարումներով, կազմակերպեցին շրջայց կենտրոնում և ներկայացրեցին իրենց առօրյան:
- Կենտրոնի Խոհարարության խմբի սաները և տարեցները հատուկ պատրաստեցին հայկական ավանդական ուտեստներ և սպասքադրեցին տոնական հյուրասիրությունը:
- Կենտրոնի Մեդիագրագիտության խմբի սաները տարեցների համար կազմակերպել էին ինտերակտիվ խաղ, որի շրջանակներում երեխաները և տարեցները կարողացան փազլների միջոցով պատկերել տեխնիկայի զարգացման փուլերը:

Միջոցառումը ամփոփվեց Սերունդների Երկխոսություն խորագիրը կրող քննարկմամբ և նվերների փոխանակմամբ: Արշավին ընդհանուր ներկա են գտնվել **46** մասնակից, որից **17 /5 տղա, 12 աղջիկ/** Փոքրիկ Իշխան կենտրոնի շահառու երեխաներ, **2** կենտրոնի շրջանավարտ/ 1տղա, 1 աղջիկ/, Տնային խնամքի **14** շահառու և **1** կամավոր, Հայկական Կարիտասի **13** աշխատակից:

- **Լունա պարային դպրոցի սաները Գավառի Փոքրիկ Իշխան կենտրոնում:** Ս/թ սեպտեմբերի 14-ին, Գավառի Փոքրիկ Իշխան կենտրոնը Բաց դռներ արշավի շրջանակներում հյուրընկալել էր Լունա պարային դպրոցի սաներին: Արշավը համընկել էր Լունա պարային դպրոցի գործունեության 10 ամյակին: Միջոցառմանը ներկա են գտնվել **65** Լունա պարային դպրոցի սան՝ **1** տղա, **64** աղջիկ: Լունա պարային դպրոցի սաներին տրամադրվել է ՓԻ կենտրոնի բակային տարածքը, համայնքային որտեղ իրականացվել են տարաժանր պարային կատարումներ, ժամանցային խաղեր:

**Աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 7 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ գործողությունները:**

**Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների գնահատված կարիքներ:**

Հաշվետու ժամանակահատվածում Հայկական Կարիտասի Գավառ «Փոքրիկ Իշխան» ցերեկանին խնամքի սոցիալական կենտրոնում աշխատանք է իրականացվել **101** երեխայի հետ (որից՝ **43** աղջիկ, **48** տղա):
- Հուլիս- **80** շահառու
- Օգոստոս- **84** շահառու
- Սեպտեմբեր- **95** շահառու

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոն է ընդգրկվել **14** երեխա (3 աղջիկ, 11 տղա), աշխատանքը ընդհատվել է **11** երեխայի հետ (5 աղջիկ, 6 տղա):
Իրականացվել են շահառու ընտանիքների դիմումների ընդունում, փաստաթղթերի հավաքագրում, կարիքների գնահատում և ԱՍԾ-ների կազմում:Պարբերաբար թարմացվել և համալրվել է շահառուների անձնական տվյալների բազան:
Ըստ եռամսյա ժամանակահատվածում **101** շահառուների շրջանում գնահատված կարիքների՝ կենտրոնի ԿԴԻՀ երեխաներն ու նրանց ընտանիքները, ովքեր ունեն սոցիալականացման և զարգացման ընթացքը խոչընդոտող զանազան հիմնախնդիրներ, մասնավորապես առանձնացվել են ըստ հետևալ սոցիալական խմբերի՝
- Միածնող ընտանիքի երեխաներ- **9**
- Ոստիկանությունում հաշվառված, իրավախախտ երեխաներ- **1**
- Սոցիալականացման դժվարություններ ունեցող երեխաներ- **4**
- Վարքային դժվարություններ ունեցող երեխաներ- **1**
- Անբարենպաստ, կոնֆլիկտային ընտանիքի երեխաներ- **2**
- Սոցիալ-տնտեսապես անապահով ընտանիքի երեխաներ- **50**
- Արցախի հանրապետությունից բռնի տեղահանված ընտանիքի երեխաներ – **16**
- Հաշմանդամություն և/կամ հատուկ կարիքներ ունեցող երեխաներ- **18**

Հաշվետու ժամանակահատվածում Գավառի «Փոքրիկ Իշխան» ցերեկային խնամքի սոցիալական կենտրոնում աշխատանք է իրականացվել **67** ընտանիքի հետ:
Սոցիալ-հոգեբանական համալիր խորհրդատվություն է իրականացվել **75** ընտանիքի անդամների հետ, որից **64** մայր, **5** հայր, **5** տատ, **1** քույր:
Ըստ իրականացված հետազոտության ծրագրի **67** շահառու ընտանիքները պատկանում են հետևյալ տեսակների՝
- **Ընդարձակ ընտանիքներ** *(երեխաների դաստիարակությունը ղեկավարում են տարբեր հարազատներ կամ ընտանիքի մի քանի անդամներ (ծնողներ, զարմիկներ, տատիկներ և պապիկներ և այլն) ապրում են նույն տանը* – **30**
- **Նուկլեար ընտանքների թիվ** *(ընտանիք, որը ստեղծվել է հոր, մոր և նրանց երեխաների կողմից)*- **28**
- **Միայնակ ընտանիք** *(բաղկացած է այն բանից, որ ծնողներից միայն մեկն է ստանձնում ընտանիքի միավորը և, հետևաբար, երեխաների դաստիարակությունը)*- **9**

Ըստ գնահատված կարիքների շահառու ընտանիքներից **45**-ը ստանում են ընտանեկան նպաստ, գործազուրկ ծնողների թիվը կազմում է **46**(որից **38** մայր, **8** հայր), աշխատանք ունեցող ծնողների թիվը կազմում է **44** (որից **21** մայր, **23** հայր), արտագնա աշխատանք ունեցող ծնողների թիվը կազմում է **15** (հայր), հաշմանդամություն ունեցող, անաշխատունակ ծնողների թիվը կազմում է **6** (հայրեր):

**Անհատական սոցիալական ծրագրերով սահմանված և ամբողջությամբ իրականացված միջոցառումներ:**

Սոցիալական աշխատողների կողմից կազմվել և պարբերաբար թարմացվել են փաստաթղթերը, մասնավորապես լրացվել են հետևյալ փաստաթղթերը՝

- Առաջնային տնային այցելության թերթիկ
- Երեխայի կարիքների գնահատում
- Շահառուի և ընտանիքի կարիքների գնահատում
- Շահառուի և ընտանքիի կարիքների վերագնահատում
- Սոցիալական պատմության հավաքագրում
- Գենոգրամի և էկոգրամի կազմում
- ԱՍԾ-ի (միջամտության պլան) կազմում
- Օրագրերի կազմում և թարմացում
- Անհատական սոցիալական աշխատանքի թերթիկի լրացում
- Ընտանիքի անդամի հետ աշխատանքի թերթիկ լրացում
- Ընթացիկ տնային այցելության թերթրիկի լրացում
- Դպրոցայցելության թերթիկի լրացում
- Սոցիալական բնույթի ծառայությունների նվիրաբերության պայմանագրի կնքում
- Անձի տվյալների վերաբերյալ հայտարարագիր

Հոգեբանը կազմվել է հետևյալ փաստաթղթերը՝

- Երեխայի անհատական քարտի լրացում
- Խորհրդատվություն երեխայի հետ
- Խորհրդատվություն ընտանիքի անդամների հետ
- Հոգեբանական աշխատանքի թերթիկ
- Տնայցեր
- Մայերի ինքնաօգնության խմբի հետ հանդիպումների թերթիկ

**Տնայցեր:** Կենտրոնի սոցիալական աշխատողները հաշվետու ժամանակահատվածում իրականացրել են **14** տնայց, որից՝ **11**-ը առաջնային հետազոտության տնայցեր և **3**-ը ընթացիկ տնայցեր:

Առաջնային տնայցի նպատակն էր հետազոտել ընտանիքի կենսապայմանները, ընտանիքի կազմը, զբաղվածությունը, երեխայի և ընտանիքի առաջնային կարիքները, դուրս բերել երեխայի հետաքրքրությունները, ուսումնական առաջադիմությունը: Առաջնային հետազոտության հիման վրա իրականացվել է կենտրոնի բազմամասնագիտական թիմային քննարկում՝ կենտրոնում շահառուների ընդգրկման նպատակով:

Ընթացիկ տնայցերը իրականացվել են ԱՍՀՆ մասնագետների հետ համատեղ՝ կենտրոն իրականացված ուսումնասիրության շրջանակներում:

**Առողջապահական, սոցիալական և կրթական հարցերի շուրջ իրավաբանական խորհրդատեղեկատվական և ուղղորդման ծառայություններ:**

- Օգոստոսի 9-ին կենտրոնի շահառու **3** Արցախից տեղահանված ծնողներ ուղղորդվել են իրավական խորհրդատվության, որը իրականացվել է **ՀՀ ՄԻՊ աշխատակազմի** կողմից կազմակերպված <<Կանանց իրավունքների պաշտպանություն և խթանում գործարարության ոլորտում>> թեմայով քննարկմանը՝ Գավառ քաղաքում:
- Հուլիսի 25-ին կենտրոնի շահառու ծնողները և **5** երեխա/աղջիկ/ կենտրոնի սոցիալական աշխատողների ուղղորդմամբ և ուղեկցմամբ մասնակցել են **«Ռեստարտ Գավառ»** Երիտասարդական ՀԿ-ի կողմից կազմակերպված է՝ Գավառում Աշխատանքի

տոնավաճառին, որտեղ Գավառի գործատուները ներկայացրել են են իրենց մոտ առկա թափուր աշխատատեղերը, իսկ աշխատանք փնտրող անձինք հնարավորություն ընձեռել դիմելու տվյալ թափուր աշխատատեղերի համար, ինչպես նաև ձևավորել նոր համագործակցային կապեր:Զուգահեռ աշխատանաքի տոնավաճառին անցկացվել են պանելային քննարկում և մոտիվացիոն ելույթներ, Գավառում աշխատաքային հնարավորությունների և բացերի մասին:

**Հանդիպում ծրագրի շահառու երեխաների ծնողների, ընտանիքի անդամների հետ:** Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի թիմը իրականացրլ է **5** հանդիպում: Շահառուների համար կազմակերպվել են արտագնա ճանաչողական և ուսմնական այցեր, ճամբարներ, փառատոներ, որոնց կազմակերպչական հարցերի, օրակարգի ներկայացման և երեխաների ծնողների համաձայնությունը ստանալու համար կենտրոնի մասնագիտական թիմի կողմից իրականացվել են տեղեկատվական հանդիպումներ: Ծրագրի շահառու ծնողների հետ իրեկանացվել հեն տեղեկատվական հանդիպումներ հետևյալ թեմաների շուրջ՝

- Շիրակի մարզի Թորոսգյուղում կազմակերպվող եռօրյա ճամբարի վերեբերյալ տեղեկատվական հանդիպումը իրականացվել է **3** ծնողի հետ: Ճամբարին մասնակցել է 4 երեխա, որից 2 տղա, 2 աղջիկ: 1 ընտանիքից մասնակցել են 2 երեխա:
- Դեպի Երևան, Սիթիզնում կազմակերպվող ուսուցողկան այցի վերեբերյալ տեղեկատվական հանդիպումը իրականացվել է **22 / 21 մայր 1 հայր/** ծնողի հետ:
- Դեպի Ստեփանավան, Դենդրոպարկ, էքստրիմ պարկ կազմակերպվող ուսուցողկան այցի վերեբերյալ տեղեկատվական հանդիպումը իրականացվել է 22 ծնողի հետ:
- Դեպի Ալավերդի կազմակերպվող սոցիալ-հոգեբանական փառատոնի վերեբերյալ տեղեկատվական հանդիպումը իրականացվել է **6** ծնողի հետ:
- Սևանի ափին կազմակերպված մեկօրյա ճամբարի վերեբերյալ տեղեկատվական հանդիպումը իրականացվել է **14** ծնողի /մայր/ հետ:

**Հանդիպում ծրագրի շահառու երեխաների հետ:** <<Ընկերասիրություն>> թեմայով հանդիմանը ներկա են գտնվել **15** շահառու՝ **7** աղջիկ, **8** տղա: Հանդիպման սկզբում իրականացվել է մտագրոհ մեթոդը, որի ընթացքում շահառուները ներկայացրել են ինչ են հասկանում ընկերասիրություն ասելով, շեշտադրելով ինչպիսի ընկերներ են իրենք իրական կյանքում: Քննարկվել է թե ինչպիսի ընկերներ կուզենային ունենալ, ով է իրենց համար իրական ընկերը: Հանդիպման ընթացքում իրականացվել է նաև առակների ընթերցում և քննարկում:

**Անհատական սոցիական խորհրդատվություն** իրականացվել է **101 երեխաների հետ:** Կենտրոնի երեք սոցիալական աշխատողները իրականացրել են անհատական խորհրդատվություն շահառու երեխաների շրջանում:

- Կենտրոնի սոցիալական աշխատող Լ. Շահբազյանը անհատական խորհրդատատվություն է տրամադրել **37** շահառուի, որից **19** աղջիկ, **18** տղա:

Հաշվետու ժամանակահատվածում Փոքրիկ Իշխան կենտրոն է ընդգրկվել **5** շահառու երեխա/ **1** աղջիկ, **4** տղա/: Նոր ընդգրկված **5** շահառու երեխայի հետ անհատական խորհրդատվությունները ուղղված են եղել կարիքների գնահատմանը, որի ընթացքում դիտարկվել է երեխաների հուզակամային վիճակը, զարգացման մակարդակի համապատասխանությունը տարիքին և սեռին, ուսման, հաղորդակցման, սոցիալական կապերի ձևավորման ունակությունները, կրթական մակարդակի համապատասխանությունը

տարիքին: Իրականացված աշխատանքների արդյունքում կազմվել է սոցիալական պատմություն, գենոգրմ և էկոգրամ, անհատական միջամտության պլան:
Անհատական խորհրդատվությունները շահառու երեխաների հետ ուղղված են եղել նաև ընտանեկան և միջանձնային հարաբերությունների կարգավորմանը, սոցիալական հմտությունների, էթիկայի կանոնների յուրացմանը, ուշադրության, մտածողության և հույզերի կապի ընկալման կարողության զարգացմանը, դրական վարքի ամրապնդմանը, ինքնարտահայտմանը, ինքնաարժևորմանը, համագործակցային և ապրումակցման կարողությունների զարգացմանը, չբավարարված պահանջմունքների վերհանմանը, սեփական ցանկությունների վերաիմաստավորմանը, վախերի հաղթահարմանը, մոտիվացիոն մակարդակի բարելավմանը, ժամանակի պլանավորման, ներելու կարողության զարգացմանը:
Անհատական խորհրդատվությունների արդյունքում տեղի է ունեցել կարիքների վերագնահատում:

- Կենտրոնի սոցիալական աշխատող Տ. Դաբաղյանը անհատական խորհրդատատվություն է տրամադրել **29** շահառուի, որից **15** աղջիկ, **14** տղա:

Հաշվետու ժամանակահատվածում անհատական խորհրդատվությունները ուղղված են եղել կարիքների գնահատմանը և վերագնահատմանը, գենոգրամի և էկոգրամի, սոցիալական պատմության, միջամտության պլանի կազմելուն: Անհատական խորհրդատվություն է տրամադրվել նաև հետևյալ ուղղություններով. միջանձնային կոնֆլիկտների կարգավորում, ինքնագնահատականի մակարդակի բարձրացում, ինքնաարտահայտման և ինքնավերլուծության մակարդակի բարձրացում, էթիկայի, զգուշության կանոնների իմացության մակարդակի բարձրացում, կոգնիտիվ ոլորտի զարգացում:
Խորհրդատվությունների ընթացքում կիրառվել են հետևյալ մեթոդները և վարժանքները.

- Անհատական զրույց
- Շեֆալի ցաբերիի այսբերգի մեթոդ
- Շեֆալի ցաբերիի ծառի մեթոդ
- Քարտերի համեմատություն:

- Կենտրոնի սոցիալական աշխատող Ն. Գևորգյանը անհատական խորհրդատատվություն է տրամադրել **39** շահառույի, որից **16** աղջիկ, **19** տղա:

Հաշվետու ժամանակահտվածում իրականացվել է անհատական խորհրդատվություն շահառու երեխաների հետ ելնելով առկա խնդիրներից:
Անհատական խորհրդատվությունների ընթացքում իրականացվել է կենտրոն ընդգրկվող երեխաների հետ ծանոթացում, զրույցի ընթացքում դուրս է բերվել շահառուների առաջնային կարիքները, կազմվել է՝ գենոգրամ, էկոգրամ, թարմացվել է միջամտության պլանը, իրականցվել է շահառուի վերագնահատում:
Անհատական խորհրդատվությունները ուղղված են նաև՝

- կենտրոնում գործող կարգ ու կանոնի իրազեկմանը
- հուզական վիճակի կարգավորման
- նպատակադրման կարողության զարգացման
- կոնֆլիկտայնության նվազեցմանը
- շփման ոլորտի կարգավորմանը

**<u>Անհատական սոցիալական խորհրդատվություն ծնողների, ընտանիքի անդամների հետ:</u>**
Սոցիալ-հոգեբանական համալիր խորհրդատվություն է իրականացվել **78** ընտանիքի անդամների հետ:

- Կենտրոնի սոցիալական աշխատող Լ. Շահբազյանը անհատական խորհրդատվություն է իրականացվել թվով **33** ընտանիքի անդամի հետ, որից **26** մայր և **3** հայր, **1** տատիկ:

Հաշվետու ժամանակահատվածում անհատական խորհրդատվություն է իրականացրել թվով **29** շահառու ծնողի և **4** ընտանիքի անդամների հետ: Անհատական հանդիպումների նպատակը եղել է շահառու ընտանիքիների կարիքների գնահատումը և վերագնահատումը, շահառու երեխաների սոցիալական, կրթական, հոգեբանական և առողջապահական կարիքների վերհանմանը և համապատասխան աջակցության տրամադրմանը:

Անհատական աշխատանքների արդյունքում թարմացվել է շահառուների ընտանեկան գենոգրամը և էկոգրամը, հավաքագրվել են սոցիալական պատմությանը վերաբերյալ տվյալներ, թարմացվել է անհատական միջամտության պլանը հաշվի առնելով ինչպես երեխայի կարծիքը, այնպես էլ ծնողի կարծիքը:

Անհատական աշխատանքները ծնողների և ընտանիքի անդամների հետ նպաստել են ծնող-երեխա, երեխա-ընտանիքի անդամ փոխհարաբերությունների, կոնֆլիկտային հարաբերությունների կարգավորմանը: Անհատական աշխատանքները ուղղված են եղել նաև երեխաների տարիքային և անհատական առանձնահատկությունների գիտակցմանը և ընդունմանը, երեխաների վարքային խնդիրների հաղթահարմանը, ծնողավարման, կենցաղավարման, ֆինանսական հմտությունների զարգացմանը:

Անհատական խորհրդատվությունների ընթացքում քննարկվել են նաև Փոքրիկ Իշխան կենտրոնի կարգապահական կանոնների պահպանման անհրաժեշտության կարևորությունը:

Ծնողների հետ անհատական խորհրդատվությունները իրականացվել են նաև շահառու երեխաների բացակայությունների կանգավորման և դեպքերի դուրս գրմանն ուղված:

Շահառուների երկարաժամկետ բացակայությունների դեպքում անհատական խորհրդատվությունների ընթացքում ծնողի կողմից լրացվել է հատուկ դիմում, որով շահառուների բացկայությունները Փոքրիկ Իշխան կենտրոնում դիտարկվել են հարգելի:

- Կենտրոնի սոցիալական աշխատող Տ. Դաբաղյանը անհատական խորհրդատվություն է իրականացվել թվով **23** ընտանիքի անդամի հետ, որից՝ **20** մայր, **1** հայր, **1** տատիկ, **1** քույր:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է անհատական խորհրդատվություն շահառու ծնողների հետ: խորհրդատվությունները ուղղված են եղել երեխայի և նրա ընտանիքի կարիքների գնահատմանը և վերագնահատմանը, ընտանիքի սոցիալական միջավայրը բացահայտելուն, ծնող-երեխա փոխհարաբերությունների բնույթին: Ծնողների հետ անհատական խորհրդատվությունները ուղղված են եղել նաև շահառու երեխաների բացակայությունների կանգավորման, հակասոցիալական վարքագծի կանխարգելմանը, ծնողի և երեխայի կողմից Փոքրիկ Իշխան կենտրոնի կարգապահական կանոնների պահպանմանը, երկարաժամկետ բացակայությունների վերաբերյալ դիմումների լրացմանը,տաք սննդից օգտվելու կարևորության գիտակցմանը, որը նպաստում է նաև շփման, հաղորդակցման հմտությունների զարգացմանը, ծնողի կողմից լրացվել է դիմում, որով հրաժարվել է տաք սննդից, կարևորելով ժամանակը հատկացնել հոգեբանական և լոգոպեդական աշխատանքին:

- Կենտրոնի սոցիալական աշխատող Ն. Գևորգյանը անհատական խորհրդատվություն է իրականացվել թվով **22** ընտանիքի անդամի հետ, որից **21** մայր, **1** տատիկ:

Հաշվետու ժամանակահտվածում իրականացվել է անհատական խորհրդատվություն շահառու ծնողների հետ, հանդիպումների ընթացքում **4** ծնողի հետ իրականացվել է շահառուների առաջնային կարիքների գնահատում, ծնողները ներկայացրել են երեխաների մոտ առկա դժվարությունները, սոցիալ-հոգեբանական, լոգոպեդական խնդիրները: